



ՃՇՀԱՀ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գիտելիքի,
ստեղծագործական կարողությունների
թեստ



ԵՐԵՎԱՆ 2026

**2026-2027 ՈւՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ «073101.00.6–ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔՈՒՀԱԿԱՆ ՔՆՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱ՝
«ԳԻՏԵԼԻՔԻ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՍՏ (ԳՍԿԹ)»**

Թեստը կազմված է 3 հիմնական բաժնից.

1. Մաթեմատիկա	36 առաջադրանք՝	9 միավոր
• Հանրահաշիվ	16 առաջադրանք՝	4,0 միավոր
• Երկրաչափություն	20 առաջադրանք՝	5,0 միավոր

2. Ճարտարապետական տրամաբանություն	4 հարց՝	1 միավոր
• Ճարտարապետական և տրամաբանական հարցեր՝	4 հարց՝	1 միավոր

*1-ին և 2-րդ բաժնի յուրաքանչյուր առաջադրանքը և հարցը գնահատվում է՝ 0,25 միավոր
/Ընդհանուր՝ 40 առաջադրանք և հարց/ 10 միավոր*

3. Գծագրություն	2 առաջադրանք՝	10 միավոր
• Աքսոնոմետրիա, հատույթ, կտրվածք, պրոյեկցիա	1 առաջադրանք՝	6 միավոր
• Լծորդում	1 առաջադրանք՝	4 միավոր

/Ընդհանուր 42 հարց-առաջադրանք/

Թեստի ամբողջական կատարման և ձևաչափի լրացման համար տրվում է 5 ժամ (300 րոպե), առանց ընդմիջման:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Թեստը չի ստուգվում:

Ճանաչվում և գնահատվում է միայն պատասխանների ձևաթուղթը և գծագրության երկու առաջադրանքները:

ԹԵՍՏ 2

1. ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

1. Նշվածներից ո՞րն է 36 և 60 թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը:

ա) 12

բ) 180

գ) 6

դ) 24

Նշումների համար

2. Գտնել $\left| \frac{3}{4} - 1 \right| : \left| 5\frac{1}{8} - 5\frac{3}{8} \right|$ արտահայտության արժեքը:

ա) -1

բ) 0,5

գ) -4

դ) 1

Նշումների համար

3. Երկու դրական թվերի գումարը 16 է, իսկ նրանց միջին երկրաչափականը 8 է: Այդ դեպքում.
ա) թվերը տարբեր են բ) թվերը հավասար են գ) թվերի արտադրյալը 32 է դ) թվերի արտադրյալը 48 է

նշումների համար

4. Աշխատողի աշխատավարձի 20%-ը պահվեց որպես հարկ: Հարկը հանելուց հետո նա ստացավ 160000 դրամ: Որքա՞ն դրամ էր աշխատողի աշխատավարձը մինչև հարկումը:

ա) 180000

բ) 192000

գ) 200000

դ) 220000

նշումների համար

5. Խանութում կար 120 մ կտոր: Առաջին գնորդը գնեց դրա 60%-ը, իսկ երկրորդը՝ մնացածի 50%-ը: Քանի՞ մետր կտոր մնաց խանութում:

ա) 12

բ) 24

գ) 48

դ) 60

նշումների համար

6. Լուծել $\frac{2x^2 - 7x + 3}{1 - 2x} = 0$ հավասարումը:

ա) 0,5

բ) 0,5 և 3

գ) 3

դ) 0,5 և 4

նշումների համար

7. Լուծել $\frac{(x^2 - 8x + 15)(x + 1)}{3 - x} \geq 0$ անհավասարումը:

ա) $(-1; 3) \cup (5; +\infty)$

բ) $[-1; 3) \cup [5; +\infty)$

գ) $(-\infty; -1) \cup (5; +\infty)$

դ) $[-1; 3) \cup (3; 5]$

նշումների համար

8. Պարանը բաժանել են 18 հավասար մասերի: Եթե նույն պարանը բաժանեին 15 հավասար մասերի, ապա յուրաքանչյուր մասի երկարությունը կմեծանար 5 սմ-ով: Որքա՞ն սմ է պարանի երկարությունը:

ա) 360

բ) 540

գ) 270

դ) 450

նշումների համար

9. Ձինվորները կանգնած են քառակուսաձև շարքով: Եթե յուրաքանչյուր շարքում և յուրաքանչյուր սյունյակում զինվորների թիվը պակասեր 3-ով, ապա ընդհանուր քանակը կնվազեր 117-ով: Քանի՞ զինվոր կար սկզբում:

ա) 361

բ) 400

գ) 441

դ) 484

նշումների համար

10. Եթե առաջին թիվը մեծացնենք 25%-ով, իսկ երկրորդը փոքրացնենք 40%-ով, ապա դրանց գումարը չի փոխվի: Որքա՞ն է այդ թվերի հարաբերությունը:

ա) 5:8

բ) 8:5

գ) 2:3

դ) 3:2

նշումների համար

11. 1:500000 մասշտաբով առաջին քարտեզի վրա երկու գյուղերի հեռավորությունը 14 սմ է: Նույն գյուղերի հեռավորությունը երկրորդ քարտեզի վրա 3,5 սմ է: Որքա՞ն է երկրորդ քարտեզի մասշտաբը:

ա) 1:1000000

բ) 1:250000

գ) 1:2000000

դ) 1:4000000

նշումների համար

12. Հարթության վրա նշված են 8 կետեր, որոնցից ոչ մի երեքը չեն գտնվում մեկ ուղղի վրա: Քանի՞ տարբեր հատված կարելի է տանել այդ կետերը միացնելով:

ա) 28

բ) 16

գ) 56

դ) 64

նշումների համար

13. $y = f(x)$ ֆունկցիայի գրաֆիկը տեղաշարժել են 2 միավոր ձախ և 4 միավոր վերև, որից հետո այն համաչափ արտապատկերել են Ox առանցքի նկատմամբ: Ո՞րն է ստացված ֆունկցիայի բանաձևը:

ա) $y = -(f(x+2)+4)$

բ) $y = -f(x+2)+4$

գ) $y = -f(x-2)+4$

դ) $y = f(x+2)+4$

նշումների համար

14. Գտնել $y = \sqrt{x}$ և $y = |x-2|$ ֆունկցիաների հատման կետերի քանակը:

ա) 0

բ) 1

գ) 2

դ) 3

նշումների համար

[15-16] Երկու պոմպ միասին ավազանը լցնում են 12 ժամում: Առաջին պոմպի հզորությունը 2 անգամ մեծ է երկրորդ պոմպի հզորությունից:

15. Քանի՞ ժամում կլցվի ավազանը միայն առաջին պոմպով:

նշումների համար

16. Քանի՞ ժամում կլցվի ավազանը, եթե սկզբում 9 ժամ աշխատի միայն առաջին պոմպը, իսկ մնացած մասը լցնի միայն երկրորդ պոմպը:

նշումների համար

[17-20] Ուղղանկյուն սեղանի հիմքերի երկարությունները 6 սմ և 10 սմ են, իսկ սուր անկյունը՝ 45°:

17. Գտնել սեղանի բարձրությունը:

ա) 2 սմ

բ) 4 սմ

գ) 6 սմ

դ) 8 սմ

նշումների համար

18. Գտնել սեղանի միջին գիծը:

ա) 16 սմ

բ) 4 սմ

գ) 7 սմ

դ) 8 սմ

նշումների համար

19. Գտնել սեղանի մեծ սրունքը:

ա) 4 սմ

բ) $4\sqrt{3}$ սմ

գ) $4\sqrt{2}$ սմ

դ) 8 սմ

նշումների համար

20. Գտնել սեղանի մակերեսը:

ա) 32 սմ^2

բ) 16 սմ^2

գ) 40 սմ^2

դ) 64 սմ^2

նշումների համար

[21-24] Ուղիղ պրիզմայի հիմքը շեղանկյուն է, որի անկյունագծերի երկարությունները 12 սմ և 16 սմ են: Պրիզմայի բարձրությունը 12 սմ է:

21. Գտնել պրիզմայի հիմքի կողմի երկարությունը:

ա) 20 սմ

բ) 10 սմ

գ) 14 սմ

դ) $2\sqrt{7}$ սմ

նշումների համար

22. Գտնել պրիզմայի կողմնային մակերևույթի մակերեսը:

ա) 960 սմ^2

բ) 240 սմ^2

գ) 192 սմ^2

դ) 480 սմ^2

նշումների համար

23. Գտնել պրիզմայի մեծ անկյունագծի երկարությունը:

ա) 20 սմ

բ) $12\sqrt{2} \text{ սմ}$

գ) 25 սմ

դ) $4\sqrt{13} \text{ սմ}$

նշումների համար

24. Գտնել պրիզմայի ծավալը:

ա) 1152 սմ^3

բ) 2304 սմ^3

գ) 1200 սմ^3

դ) 576 սմ^3

նշումների համար

[25-26] 12 սմ կողմով կանոնավոր վեցանկյան AC և BD անկյունագծերը հատվում են M կետում:

25. Գտնել AM հատվածի երկարությունը:

ա) $4\sqrt{3} \text{ սմ}$

բ) $8\sqrt{3} \text{ սմ}$

գ) $12\sqrt{3} \text{ սմ}$

դ) $6\sqrt{3} \text{ սմ}$

նշումների համար

26. Գտնել *ABM* եռանկյան մակերեսի հարաբերությունը վեցանկյան մակերեսին:

ա) 1:12

բ) 1:9

գ) 1:18

դ) 1:6

նշումների համար

[27-28] 20 սմ շառավղով շրջանագծի երկու զուգահեռ լարերն ունեն 24 սմ և 32 սմ երկարություն:

27. Գտնել լարերի հեռավորությունը, եթե դրանք գտնվում են կենտրոնի տարբեր կողմերում:

ա) 24 սմ

բ) 26 սմ

գ) 28 սմ

դ) 30 սմ

նշումների համար

28. Գտնել լարերի հեռավորությունը, եթե դրանք գտնվում են կենտրոնի նույն կողմում:

ա) 2 սմ

բ) 12 սմ

գ) 16 սմ

դ) 4 սմ

նշումների համար

[29-30] Գլանի բարձրությունը 10 սմ է, իսկ առանցքից 9 սմ հեռավորության վրա գտնվող և առանցքին զուգահեռ հարթությամբ հատույթի մակերեսը 240 սմ² է:

29. Գտնել գլանի շառավիղը:

ա) 12 սմ

բ) 13 սմ

գ) 15 սմ

դ) 10 սմ

նշումների համար

30. Գտնել գլանի կողմնային մակերևույթի մակերեսը:

ա) 150π սմ²

բ) 300π սմ²

գ) 240π սմ²

դ) 600π սմ²

նշումների համար

[31-32] Տրված է A սուր անկյունով, $AB = 5$, $BC = 10$ կողմերով և 48 մակերեսով $ABCD$ զուգահեռագիծը: Զուգահեռագծի A գագաթը միացված է BC կողմի F միջնակետին, իսկ C գագաթը՝ AD կողմի E միջնակետին: M -ը AF և BE , իսկ N -ը՝ CE և FD հատվածների հատման կետերն են:

31. Գտնել $BEDF$ քառանկյան մակերեսը:

նշումների համար

32. Գտնել MN հատվածի երկարությունը:

նշումների համար

**[33-36] $ABCA_1B_1C_1$ հատած բուրգի հիմքերը 12 և 6 կողմերով կանոնավոր եռանկյուններ են:
 AA_1 կողմնային կողի երկարությունը 3 է և ուղղահայաց է հիմքի հարթությանը:**

33. Գտնել BB_1C_1C նիստի բարձրության երկարությունը:

նշումների համար

34. Գտնել BB_1C_1C կողմնային նիստի և մեծ հիմքի հարթության կազմած երկնիստ անկյան աստիճանային չափը:

նշումների համար

35. Գտնել հատած բուրգի ծավալի և $\sqrt{3}$ թվի արտադրյալը:



նշումների համար

36. Գտնել BB_1 կողմնային կողի երկարության քառակուսին:


նշումների համար

2. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

37. Ո՞ր ուրվագծային սխեման է համապատասխանում ներկայացված հեռանկարային տեսքին:




ա)



բ)




գ)




դ)

38. Ո՞ր ուրվագծային սխեման է համապատասխանում ներկայացված հեռանկարային տեսքին:





39. Քառակուսու մեջ առավելագույնը քանի՞ հատ մուգ գույնով ներկված փոքրիկ եռանկյունի կտեղավորվի:



- ա) 40
- բ) 32
- գ) 36
- դ) 24

40. Պատկերները ձախից աջ փոփոխվում են որոշակի տրամաբանությամբ, որոշեք, թե ո՞ր պատկերը կարող է լինել դատարկ տեղում: Նշել ճիշտ պատասխանը:



- ա)
- բ)
- գ)
- դ)

1. Աքսոնոմետրիա, հատույթ, կտրվածք, պրոյեկցիա

Տրված են մարմնի երկու պրոյեկցիաները: Պահանջվում է կառուցել մարմնի բացակայող պրոյեկցիան (տեսքը ձախից), ուղղանկյուն իզոմետրիկ քսոնոմետրիան և տալ բոլոր անհրաժեշտ կտրվածքները:

